

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՈՒՒՏԱՒՈՐՆԵՐԸ

Երուսաղեմը՝ իբր համաքրիստոնեական սրբավայր, իր ուրոյն եւ առանձնակի տեղն ու նշանակութիւնը ունի իւրաքանչիւր քրիստոնեայ հաւատացեալի պատմ: Տէրունակոյի այս քաղաքուն են տեղի ունեցել Զրիստոսի կեանքի ամենանշանակալի եւ յիշարժան դէպքերը. հանդիսաւոր մուտք յԵրուսաղեմ, վերջին ընթրիք, մատնութիւն, խաչելութիւն, թաղում, յարութիւն եւ համբարձում: Հայերը նոյնպէս, լինելով քրիստոնեական մեծ ընտանիքի կարեւոր եւ ամենահին անդամներից մէկը, մեծ յարգանք են տածում այդ քաղաքի հանդէպ:

Միջնադարեան եւ աւելի վաղ ժամանակաշրջանի հայ եւ օտար պատմիչներից մեկ ասանդում գրական ժառանգութիւնից տեղեկանում ենք, որ հայերը վաղ քրիստոնեական շրջանից արդէն հաւատաւորել էին Երուսաղեմում եւ ունէին բաւական մեծ թուով վանքեր եւ եկեղեցիներ: Երուսաղեմում Հայաստանից ուխտի եկած հաւատացեալներ են եղել նոյնիսկ Զրիստոսի ժամանակ: Ըստ ասանդութեան՝ Երուսաղեմում ուխտի են գնացել նաեւ մեր հաւատքի հայր Գրիգոր Լուսաւորիչը, Տրդատ թագաւորը, հետագայ դարերի ընթացքում՝ կաթողիկոսներ, հայ նախարարներ, Կիլիկեան շրջանում՝ հայ թագաւորներ ու թագուհիներ, իշխաններ եւ արքայադուստրեր: Խաչակրաց արշաւանքներին հայկական պորամիաւորումները աչքի են ընկել իրենց խիստաւորեալ եւ հաւատքի համար ցոլուելու պատրաստականութեամբ: Հայ ուխտաւորների հոսքը ձգուել է մինչեւ 1915 թ.: Երուսաղեմ այցելած իւրաքանչիւր հաւատացեալ *միտում էր մահտեսի կամ հաճի* պատուանոնով: Ուխտաւորների հոսքը չի ընդհատուել նաեւ Մեծ Եղեռնից յետոյ: Թէեւ փոքր թուով, սակայն ամէն տարի Միջին Արեւելքում ապաստան գտած տարագիր հայերից հապարաւոր ուխտաւորներ շարունակել են Զատիկի շրջանում ուխտի գալ Երուսաղեմ՝ նախնեաց ասանդութեանը հետեւելով:

Յստօք, այսօր քաղաքական անկայուն իրավիճակի բերումով Սուրբ Երկիրը հայ ուխտաւորի ներկայութեան պակաս է պզում. ընդհատուել է հայ ուխտաւորի հոսքը: Այդուհանդերձ, չնայած քաղաքական անկայուն վիճակին, այս տարի եւս Երուսաղեմը ընդունեց, բացի Աթէնքի, Պոսթօնի, Խարկովի անհատ ուխտաւորներից, հայ ուխտաւոր հոգեւորականներ. Էջմիածնից՝ Տ. Արշէն Արդ. Սանոսեան եւ Տ. Աբգար Արդ. Յովակիմեան, Անթիլեասից՝ Տ. Նարեկ Եպս. Ալեկմէլեան եւ Ուաշինգթօնից՝ Տ. Վիգէն Եպս. Այքապեան: Հիւր հոգեւորականները մասնակցեցին տօնական արարողութիւններին եւ, հակառակ դրանց յագեցած լինելուն, կարճ ժամանակամիջոցում առիթ ունեցան այցելել նաեւ Երուսաղեմի տարբեր կրօնական սրբավայրեր, ինչպէս նաեւ՝ Մեռեալ ծով եւ Գալիլիայի շրջան, ուր ծանօթացան մշակութային եւ պատմական արժէք ներկայացնող հնութիւններին եւ հոգեպէս հաղորդուեցին քրիստոնեական սրբութիւններին: Մեկնումից մէկ օր առաջ, ի պատիւ ուխտաւոր հիւրերի, Միաբանական ընթրիք տրուեց Երիքովի ճաշարաններից մէկում:

Հիւրերը իրենց ուխտը նորոգած եւ հոգեկան մեծ լիցք ստացած վերադարձան իրենց հայրենիք՝ տանելով իրենց հետ Սուրբ Երկրից անջնջելի եւ յաւերժ կենդանի յիշատակներ:

ԿՈՐԻՒՆ ԱՐԼ.